# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ի պատասխան № **LGDRP/LS/PG-2024-003 «Էլեկտրոնային և համակարգչային սարքերի ու օժանդակ պարագաների գնման»** մրցույթի վերաբերյալ 04.07.2024թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարգելի գործընկերներ,
Խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցադրումները:
Լոտ 2 Համակարգիչ
Հարց 1: Պահանջում նշված է Hard Drive 2(separate) - HDD 2 TB HDD: Ի՞նչ է նշանակում separate, և արդյո՞ք պետք է 2-րդ սկավառակը լինի համակարգչի մեջ, թե մատակարարվի առանձին:
Հարց 2: Պահանջում նշված է 1 USB 3.2 Gen 2x2 Type-C® port. Արդյո՞ք դա նշանակաում է, որ ահնրաժեշտ է 1 հատ USB 3.2 Gen 2 պորտ:
Հարց 3: Խնդրում ենք պարզաբանել, թե Rear (For 35 W) պահանջը ի՞նչ է նշանակում ու ինչի՞ն է վերաբերվում:
Հարց 4: Պահանջում նշված է 1 Optional port HDMI 2.0b/Displayport 1.4a (HBR3)/VGA/PS2/serial/USB Type-C with DisplayPort Ethernet/gigabit: Արդյո՞ք սա նշանակում է, որ անհրաժեշտ է նշված պորտներից մեկը, որը պետք է առաջարկվող մոնիտորին լինի համապատասխան:
Մոնիտոր
Հարց 5: Պահանջում նշված է Resolution-FHD 1920 x 1080 at 75Hz: Ցանկանում ենք նշել, որ սովորաբար 75 Hz ունենում են ավելի բարձր արժեքի/խաղային/ մոնիտորները: Արդյո՞ք ընդունելի է առաջարկել 60Hz պարամետրով մոնիտոր:
Հարց 6: Տեխնիկական բնութագրում կրկնվում է հետևյալ պահանջը HDMI պորտի մասով: Նշված է 2 x HDMI և HDMI 1.4, VGA: Արդյո՞ք ընդունելի կլինի առաջարկել մոնիտոր, որը ունի 1x թվային և 1x անալոգային պորտ /օր.՝ 1xHDMI կամ 1xDP, և 1x VGA պորտ/:
Մկնիկ
Հարց 7: Ձեր կողմից մկնիկի օպտիկական սենսորի կետայնության պահանջում՝ 800/1200/1600/2400 DPI նշված 1600/2400 DPI պահանջը բոնորոշ է թանկարժեք գրաֆիկական և խաղային մկնիկների դեպքում: Արդյո՞ք հնարավոր է առաջարկել մկնիկ պահանջում նշված մյուս պարամետրերից որևէ մեկով:
Տպիչ
Հարց 8: Տեխնիկական բնութագրում նշված է separate Toner Cartridge and separate Imaging Drum և Toner Cartridge for the suggested printer: Արդյո՞ք սա նշանակում է, որ Ձեզ անհրաժեշտ է 2 լրացուցիչ քարթրիջ և 1 հատ Imaging Drum:
Ստեղնաշար
Հարց 9: Ձեր կողմից պահանջվում է ստեղնաշար միայն անգլերեն լեզվով: Արդյո՞ք հնարավոր է առաջարկել անգլերեն/ռուսերեն ստեղնաշար:
Կանխավ շնորհակալություն:

Պատասխան՝

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան 04.07.2024թ. Armeps համակարգով ստացված հարցման սույնով ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել, որ **Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագրի (ՏԻԱԲԾ)** շրջանակներում իրականացվող **«Էլեկտրոնային և համակարգչային սարքերի ու օժանդակ պարագաների գնում»** Տեղական գնանշման հարցման թիվ **LGDRP/LS/PG-2024-003** ծածկագրով մրցութային փաստաթղթում կատարվել է փոփոխություն: **Մասնավորապես՝ վերախմբագրվել են տեխնիկական մասնագրերը:**

Ուստի մրցութային հայտը պատրաստելուց պետք է օգտվել նշված մրցույթի փաստաթղթերի վերախմբագրված տարբերակից, որը կարելի է ներբեռնել www.armeps.am համակարգից և www.gnumner.am կայքերից:

**Թիվ LGDRP/LS/PG-2024-003 ծածկագրով մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում՝ 2024թ. հուլիսի 26-ը ժամը 10:00-ն:**

Մրցույթին հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումով՝ https://www.armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=10571531

*Մրցույթի քարտուղար՝ Ռոզա Դանիելյան*
*Գնումների վարչության պետի պարտականությունները կատարող՝ Ռ. Ասատրյան*
*Հեռախոս՝ +374 41 500 260*